

# Դատական նախադեպի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Ղանբարյան Արթուր

*Օրենք և իրականություն: քիվ 1, 2006, էջեր 16-20*

ՀՀ իրավունքի աղբյուրների համակարգում դատական նախադեպի ունեցած տեղի և դերի վերաբերյալ իրավագիտության մեջ արտահայտվել են իրարամերժ մոտեցումներ: Թեև դեռևս առանձին իրավաբաններ հերքում են դատական նախադեպի որպես իրավունքի աղբյուր լինելու հանգամանքը (հաճախ այդ ժխտողական մոտեցումը մնում է միայն հասկացությունների, տերմինների օգտագործման հարթությունում), սակայն դատական նախադեպի նկատմամբ նիհիլիստական մոտեցումը կարծում ենք ապրել է իր դարը ոչ միայն ընդհանուր իրավական զարգացումների տեսանկյունից, այլ նաև ՀՀ-ում Սահմանադրական փոփոխություններում նախատեսված այն դրույթի գործողության պայմաններում, ըստ որի Վճռաբեկ դատարանը ապահովում է օրենքների միատեսակ կիրառությունը /այս նախն ստորև/:

Կարծում ենք դատական իրավաստեղծագործության ճանաչմանն ուղղված գործունեությունը ոչ արդյունավետ կհամարվի, եթե սահմանափակվենք պարզապես քարոզելով դատական նախադեպի անհրաժեշտությունը՝ անտեսելով այն գործոնները և պայմանները, որոնց առկայությունը կամ բացակայությունը խոչընդոտում կամ նպաստում են ՀՀ-ում դատական նախադեպի ինստիտուտի կայացմանը:

ՀՀ-ում դատական նախադեպի կայացման օբյեկտիվ անհրաժեշտության գիտակցման և այդ ինստիտուտի կայացման իրական կամքի առկայության պայմաններում՝ մի կողմից՝ պետական իշխանության կողմերը, մյուս կողմից՝ իրավաբանական հանրությունը՝ իր տեսական և գործնական ներուժով, պարտավորված են օժանդակել և իրականացնել ՀՀ-ում դատական նախադեպի ինստիտուտի կայացման հիմնախնդիրների համակողմանի հետազոտման աշխատանքները:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել այն հիմնական գործոնների համառոտ վերլուծությունը, որոնք, մեր կարծիքով նպաստում կամ խոչընդոտում են ՀՀ-ում դատական նախադեպի կայացմանը: ՀՀ-ում դատական նախադեպի կայացման տեսանկյունից անհրաժեշտ է քննարկել առնվազն հետևյալ խնդիրները՝

1. *Դատական նախադեպի նկատմամբ իրավական-հոգեբանական դիրքորոշման վերանայում:*
2. *Դատական իրավաստեղծագործության սուբյեկտների մեթոդաբանական գրագիտության, ստեղծագործական ներուժի խթանում, դատական պրոֆեսիոնալիզմի ակմեոլոգիական ընկալումը:*
3. *Դատական նախադեպի իրավական հիմքերի ամրագրում:*
4. *Դատարանակազմական նշանակության պայմանների ստեղծում և դատավորների առանձին կարծիքի ինստիտուտի զարգացում:*
5. *Դատական որոշումների մատչելիության ապահովում:*

1. Հայտնի է, որ խորհրդային ժամանակ պաշտոնական և իրավաբանական շրջանակներում դատական նախադեպը որպես բուրժուական ինստիտուտ առավելապես հերքվում էր: Այս մերժողական քաղաքականությունն այնքան ուժեղ էր, որ այն հեղինակները, որոնք այս կամ այն կերպ կոչն էին դատական նախադեպին ստիպված էին իրենց դիրքորոշումը քողարկելու նպատակով օգտագործել այլ հասկացություններ՝ իրավադրույթներ, դատական պրակտիկա և այլն: Դատական նախադեպի նկատմամբ մերժողական քաղաքականությունը ընդգրկում էր նաև ԲՈՒՀ-ական համակարգը: Այս մոտեցումը ներարկվում էր նաև ձևավորվող իրավաբանների գիտակցության մեջ:

Անկախացումից հետո թվում էր դատական նախադեպի նկատմամբ վերաբերմունքը պետք է որոշակի փոփոխություն ապրեր: Սակայն իրավիճակի իրական և համակողմանի գնահատման պայմաններում հասկանալի է, որ դատական նախադեպի նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորումը ժամանակ է պահանջում:

Իրավաբանական հանրության կողմից դատական նախադեպի ճանաչման գործընթացում իր բացասական ազդեցությունը թողեց իրավաբանների մոտ առավել լայն դրսևորվող

այնպիսի հոգեբանական գործոն ինչպիսին է ռիզիդայնությունը: Հոգեբանության մեջ ռիզիդայնությունն ասելով հասկացվում է սուբյեկտի ծրագրավորված գործունեության փոփոխության դժվարացում, նույնիսկ անհնարինություն, այնպիսի պայմաններում, երբ նման փոփոխությունները թելադրված են օբյեկտիվ պատճառներով: Ռիզիդայնության դեպքում մարդը ունակ չի լինում արձագանքելու նոր իրավիճակին, վերակառուցել վարքագծի ձևերը, յուրացնել նոր միջոցները, շտկել գործունեության ծրագիրը:

ՀՀ-ում սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում իրավունքի աղբյուրների համակարգում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, որոնցից շատերը դժվարությամբ, և նույնիսկ ցավազին ընկալվեցին տարբեր սոցիալական շերտերի կողմից:

Ահա քննարկվող հարցի տեսանկյունից իրավաբանական հանրության այն շերտերը, որոնք տառապում են ռիզիդայնությամբ, դեռևս շարունակում են մերժել դատական նախադեպը: Իրավական ռիզիդայնության դրսևորման վառ օրինակ կարելի է համարել այն մոտեցումը, ըստ որի ՀՀ-ում դատական նախադեպը չի կարող համարվել իրավունքի աղբյուր, քանի որ ՀՀ-ը պատկանում է ռոմանագերմանական իրավական համակարգին, որտեղ դատական նախադեպը իրավունքի աղբյուր չէ: Այս մոտեցման կողմնակիցները չեն ցանկանում, կամ չեն կարող գիտակցել իրավական համակարգերի կոնվերգենցիայի օբյեկտիվ գործընթացը, որի պայմաններում անընդունելի է դառնում նման հիմնավորումը:

Մենք կիսում ենք այն մոտեցումը, որ ռիզիդայնությունը մասնակիորեն հանդիսանում է պրոֆեսիոնալ դեֆորմացիայի հետևանք<sup>1</sup>, քանի որ շատ հաճախ ծագում է ստրեստոզեն իրավիճակում, ինչպես նաև վարքագծի կոշտ կարգավորման պայմաններում, ինչն առավել ցայտուն կերպով դրսևորվում է իրավաբանական պրակտիկայում:

Դատական նախադեպի նկատմամբ ռիզիդային մոտեցման վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ այդ դիրքորոշումը կարող է փոխանցվել իրավաբանների նոր ձևավորվող սերնդին: Առ այսօր ՀՀ ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներում հաճախ կարելի է լսել այն մոտեցումը, որ ՀՀ-ում դատական ակտերը չեն կարող համարվել իրավունքի աղբյուր :

Մինչդեռ արդի ժամանակաշրջանում կարծում ենք ԲՈՒՀ-ի հիմնական առաքելություններից մեկը պետք է համարվի նաև ուսանողների մոտ նախադեպային մտածողության ձևավորումը, որի պայմաններից է դասագրքերում տեսական դրույթներից և օրենքի լայնածավալ մեջբերումներից բացի, դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումների ներկայացումը, դատական որոշումների մեկնաբանումը:

Իրավաբանական հանրությունում հաճախ կարելի է լսել տեսության և պրակտիկայի անջրպետի մասին ինչ-որ տեղ արդարացված, միևնույն ժամանակ ցավ պատճառող կարծիքներ: Այս առումով, կարծում ենք, մեծ քննադատության չենք արժանանա, եթե խոստովանենք ոչ երկար տարիների ընթացքում տեսական հետազոտություններին զուգահեռ դատարաններում իրականացված գործնական աշխատանքի արդյունքում ձևավորված մեր այն համոզմունքը, որի համաձայն *մեզ հետաքրքրում է ոչ այնքան, թե ինչ է գրված օրենքում, այլ այն, թե գործնականում օրենքում գրվածը ինչպես է կիրառվում*:

Միևնույն ժամանակ համալսարաններում լայն կիրառում ստացած իրավաբանական կլինիկաների գործունեությունը, համալսարաններում արտագնա դատական գործերի քննությունների կազմակերպումը, տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվող դատախաղ մրցույթները, որտեղ ուսանողները հիմնականում առնչվում են միջազգային դատական ատյանների նախադեպերին, լրացնում են վերը նշված բացերը:

2. Դատական իրավաստեղծագործությունը նշանակում է, որ դատավորը դադարում է սոսկ իրավակիրառ մարմին լինելուց, ուստի պետք է փոփոխվեն նաև դատավորին ներկայացվող պահանջները: Խորհրդային համակարգից իրավական պետության անցման պայմաններում պետք է միջոցներ ձեռնարկվեն դատավորների հոգեբանության արմատական փոփոխության, մեթոդաբանական, մշակութաբանական գրագիտության զարգացման ուղղությամբ: Դատական նախադեպ ձեւավորող դատավորները պետք է օժտված լինեն ոչ միայն իրավաբանական մտածողությամբ, այլ դրան զուգահեռ պետք է զարգացած լինի դիալեկտիկական, մշակութաբանական մտածողությունը:

<sup>1</sup> Минниес И. А., Захарченко А. В. К проблеме профессионального сознания юристов (по материалам социологического исследования) Академический юридический журнал 2000 г. N 2 (2) (октябрь-декабрь).

Դատական կորպուսի կադրային քաղաքականության սուբյեկտները դատական պրոֆեսիոնալիզմը պետք է ընկալեն ակնեռլոգիական (akme – հին հուներենում նշանակում է բարձրագույն կետ, հասունացում, logos - ուսմունք) առումով: Ակնեռլոգիայի՝ որպես նոր գիտական ուղղության, ուսումնասիրության հիմնական ոլորտը կապված է պրոֆեսիոնալիզմի՝ որպես մարդու զարգացման, հասունացման բարձրագույն աստիճանի հետազոտման հետ: Հոգեբանական գիտության ներկայացուցիչները հատուկ հետազոտություններ են իրականացնում պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմի ակնեռլոգիական հարցերի ուղղությամբ<sup>2</sup>, որոնք կարող են օգտագործվել նաև դատական ակնեռլոգիայի ոլորտում:

Ակնեռլոգիայի հիմնադրույթներից է պրոֆեսիոնալ հասունությունը, կոմպետենտությունը: Կախված մասնագիտական հասունությունից պետք է առանձնացվեն դատավորի պրոֆեսիոնալ կոմպետենտության մի քանի տեսակներ՝ 1. հատուկ կոմպետենտություն, որը ենթադրում է, որ անձը տիրապետում է մասնագիտական գործունեությանը, 2. սոցիալական կոմպետենտություն, որը ենթադրում է մասնագիտական համատեղ գործունեության և համագործակցության եղանակների տիրապետում /կոմպետենտության այս տեսակը հատկապես կարևորվում է դատական գործերի կոլեգիալ քննության ժամանակ/, 3. անձնային-անհատական՝ մասնագիտության ոլորտում ինքնարտահայտման և ինքնազարգացման եղանակների տիրապետում, իր մասնագիտական անհատականության ստեղծագործական դրսևորման ունակություն: Կոմպետենտության այս տարրերի առկայությունը վկայում է մասնագիտական գործունեության ոլորտում անձի մասնագիտական հասունացման մասին:

Կոմպետենտություն հասկացության մեջ ընդգրկվում են՝ 1. գործունեության առարկայի և օբյեկտի ամբողջական իմացություն, 2. իր գործունեության ոլորտում ոչ ստանդարտ հարցերում կողմնորոշվելու և դրանք լուծելու ունակություն, 3. իր գործունեության հետ կապված ցանկացած երևույթ բացատրելու ունակություն, 4. աշխատանքի և դրա հետևանքների հստակ գնահատման ունակություն: Օրինակ՝ իրավական ոլորտում ոչ ստանդարտային իրավիճակ է համարվում օրենքի բացի պայմաններում օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառումը: Դատավորը օրենքի բացի պայմաններում հայտնվում է ոչ ստանդարտային իրավիճակում և միայն մասնագիտական հասունացման պայմաններում նա կարող է ճիշտ կողմնորոշվել, կիրառել իրավունքի անալոգիա՝ միաժամանակ գիտակցելով իր այդ գործողության հետևանքները: Ահա դատական կոմպետենտության տարր համարվող ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և այն լուծելու ունակության պայմաններում է հնարավոր անալոգիայի ձևով դատական իրավաստեղծագործության իրականացումը<sup>3</sup>:

Դատական նախադեպի կայացման համար վճռական նշանակություն ունի նաև դատավորների տեսական-իրավական մտածողության ձևավորումը: Առ այսօր դատավորների տեսաիրավական իմացությունը չի հանդիսանում դատական պրոֆեսիոնալիզմի գնահատման հիմնական չափանիշներից: Պետության կողմից պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի դատական պրոֆեսիոնալիզմը ասոցացվի դատավորների գիտական-իրավական գիտակցության հետ: Այս տեսանկյունից ողջունելի է «Արդարադատության բարձրագույն դպրոցի մասին» ՀՀ օրենքի նախագիծը և մասնավորապես նախագծի այն դրույթը, որ դպրոցում ուսման ընթացքում ուսուցանվելու են իրավունքի փիլիսոփայություն և դատական ակտերի հիմնավորում առարկաները<sup>4</sup>:

Իրավունքի փիլիսոփայության դերը կարևորվում է, քանի որ իրավահասկացողությունը հանդիսանում է իրավակիրառողի իրավագիտակցության հիմքը: Ակնհայտ է, որ դատավորների տեսա-իրավական գիտակցության բաղկացուցիչ մասն է կազմում իրավահասկացողությունը: Ի դեպ, անընդունելի ենք համարում այն միտքը, որ ժամանակակից նորմատիվ իրավահասկացողությունը հանդիսանում է կիրառական

<sup>2</sup> Валуков В.Ф. Правовая компетентность в структуре акмеологической культуры служащих (Содержание и пути развития) : Дис. ... канд. психол. наук: М., 2001, Коломиец Н.О. Акмеологические условия и факторы развития организационной культуры госслужащего: Дис. ... канд. психол. наук: М., 2001, Арутюнян С. Акмеологический подход к становлению профессионализма государственных служащих. Հանրային Կառավարում. 2004, թիվ 1-2, էջեր 116-122:

<sup>3</sup> Կարծում ենք դատական ակնեռլոգիայի հետ կապված հարցերը խիստ արդիական են և պետք է գտնվեն իրավաբանների, հոգեբանների ուշադրության կենտրոնում:

<sup>4</sup> Դատական իշխանություն. Ապրիլ, 2005. 4/69/, էջեր 6-14:

նշանակություն ունեցող միակ հնարավոր գիտական մոտեցումը<sup>5</sup>: «Իրավունքը և արդարադատությունը (հարաբերակցության մեթոդաբանական ասպեկտը)» հողվածում ներկայացրել ենք արդարադատության ոլորտում նորմատիվիստական և իրավաբանական իրավաբանական կիրառական նշանակությունը<sup>6</sup>:

Իդեալ նշենք, որ Արդարադատության բարձրագույն դպրոցում իրավունքի փիլիսոփայության դասավանդումը կնպաստի մեթոդաբանական, մշակութաբանական մտածողության ձևավորմանը, եթե դասընթացի հեղինակը չսահմանափակվի միայն ազատական-իրավաբանական իրավաբանական ուսումնունքը ներկայացնելով:

**3. Դատական նախադեպի իրավական հիմքերի ամրագրում:** *Չայ իրավաբաններից հաճախ կարելի է լսել կարծիք, ըստ որի ԳԳ-ում բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումները չեն կարող համարվել իրավունքի աղբյուր, քանի որ չկա մի օրենք կամ իրավական նորմ, որով դատական որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումները կհամարվեն պարտադիր: Թեև այն երկրներում, որտեղ նախադեպը պատմականորեն համարվել է իրավունքի աղբյուր, այդ մասին չի եղել իրավական նորմ /օրինակ Անգլիայում/, սակայն հաշվի առնելով ԳԳ իրավական ավանդույթները, կարծում ենք, դատական նախադեպի կայացման համար իրոք անհրաժեշտ է ինչ-որ կերպ դատական նախադեպի պարտադիրությունը իրավագիտակցության մակարդակից տեղափոխել նաև պաշտոնական հարթություն: 2003թ. մեր հողվածներից մեկում առանձնացրել ենք Վճռաբեկ դատարանի պալատների որոշումներին պաշտոնական /ծեւականորեն/ պարտադիր ուժ տալու երկու տարբերակներ: Տարբերակ առաջին: Դատավարական կամ դատարանակազմական օրենսդրության մեջ ուղղակի սահմանել, որ վճռաբեկ դատարանի պալատների որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար համանման գործեր քննելիս: Տարբերակ երկրորդ: Վճռաբեկ դատարանի պալատները իրենց կողմից քննվող գործով կարող են հղում կատարել իրենց՝ նախկինում կայացրած որոշման վրա, որը կվկայի այն մասին, որ վճռաբեկ դատարանի պալատը գործերը վերանայելիս պաշտոնապես ղեկավարվում է իր նախադեպով»<sup>7</sup>: Այս հողվածում նշել ենք. «Վճռաբեկ դատարանի պալատների որոշումների պարտադիրությանը պաշտոնական բնույթ տալու առաջին տարբերակը ներկայումս կարող է հեղափոխական դիրքորոշում ունենալու մեղադրանքների տեղիք տալ, թեև մեր գիտակցության մեջ գերիշխում է, որ օրենքով ամեն ինչ հստակ պետք է նշվի»<sup>8</sup>: Ուստի առաջարկել ենք գնալ երկրորդ տարբերակով:*

*Չնայած վերադաս դատարանների դատական որոշումների պարտադիրությունը օրենքով ամրագրելու առաջարկը որպես հեղափոխական մոտեցում որակելու մեր մտավախությանը՝ պետք է արձանագրենք, որ իրավաստեղծ մարմինները արդարացիորեն գնացել են հենց այդ ուղիով: Այսպես՝*

**1.** *«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԳԳ օրենքի /ընդունվել է 08.07.2005/ 58 հողվածի երկրորդ մասի համաձայն՝ դատարանը կարող է Կարգավորողի գործողությունները, որոշումները եւ եզրակացություններն ապօրինի համարել եւ բեկանել միայն այն դեպքում եւ հիմքով, երբ ի հայտ է եկել՝ 1) դրանց կամայական կամ խտրական բնույթը. 2) դրանց հակասությունը սահմանադրական իրավունքին, իրավասություններին, արտոնություններին կամ անձեռնմխելիություններին. 3) դրանք ընդունվել են դատական նախադեպերի, /ընդգծումն՝ Ղ.Ա./ սահմանված իրավասությունների կամ սահմանափակումների (սույն մասի 1-ին կետի համաձայն) խախտմամբ: Ինչպես տեսնում ենք, արդեն օրենսդրական մակարդակով օգտագործվում է «դատական նախադեպ» եզրույթը, ինչը կարելի է խիզախ քայլ համարել:*

*«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԳԳ օրենքի 58 հողվածից բխում է, որ եթե էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը Կարգավորող մարմինը ընդունի ակտ, որը հակասում է նախկինում կայացված դատական որոշման մեջ արտացոլված իրավական*

<sup>5</sup> Аверин А. В. Судебное правоприменение и формирование научно-правового сознания судей: Автореф. дис. ... д-ра юрид. наук. Саратов, 2004. ст. 16.

<sup>6</sup> Ղամբարյան Ա. Իրավունք եւ արդարադատություն /հարաբերակցության մեթոդաբանական ասպեկտը/. Իրավագիտության հարցեր, 2004. թիվ 1-2:

<sup>7</sup> Ղամբարյան Ա. Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների նշանակությունը ստորադաս դատարանների համար: Իրավագիտության հարցեր, թիվ 4, 2003թ, էջեր 42-51:

<sup>8</sup> Ղամբարյան Ա. նույն տեղը էջ 50:

դիրքորոշմանը, ուստի դատարանը իրավունք ունի դատական նախադեպի խախտման հիմքով ապօրինի ճանաչել այդ ակտը:

2.«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ում նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեն՝ ՀՀ սահմանադրական դատարանը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում, ՀՀ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը՝ օրենքին կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասով: Նշված նորմն է մեզ հիմք տալիս նշելու, որ ՀՀ-ում դատական բացասական իրավաստեղծագործության դրույթներ պարունակող դատական որոշումները պետության կողմից պաշտոնապես ճանաչվել են որպես իրավունքի աղբյուր:

3.Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասի համաձայն Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքների միատեսակ կիրառությունը: Մի շարք իրավաբաններ գտնում են, որ այս դրույթը որևէ առնչություն չունի դատական նախադեպի հետ: Թեև գիտակցում ենք, թե ինչ տրամաբանությամբ է հերքվում սահմանադրական այս դրույթի կապը դատական նախադեպի հետ, բայց և անընդունելի ենք համարում նման միակողմանի մոտեցումը:

Բանն այն է, որ «օրենքի միատեսակ կիրառություն» հասկացությունը իներցիայի ուժով կապվում է նախկին Գերագույն դատարանի պլենումի կամ ներկայիս Դատարանների նախագահների խորհրդի պարզաբանումների հետ: Նման նույնացումը մեզ համար անընդունելի է: Օրենքների միատեսակ կիրառությունն ապահովվում է ոչ այնքան այս կամ այն մարմնի՝ իրական գործից կտրված պարզաբանումների միջոցով, այլ դատարանի կողմից կոնկրետ գործերի քննության ընթացքում արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Հուսով ենք Սահմանադրական այս նորմի իմաստը ճիշտ կընկալվի օրենսդրի կողմից և այն հետագա օրենսդրական կոնկրետացումներով կհանդիսանա դատական նախադեպի սահմանադրական հիմքը: Ի դեպ, այս հարցում առկա են լավատես լինելու բավարար հիմքեր: 2005թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ դատավորների միության ընդհանուր ժողովում Սահմանադրության փոփոխությունների քննարկման ժամանակ դատական իշխանության մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց ելույթներում նշեցին, որ սահմանադրական այդ նորմը ՀՀ իրավական համակարգում դատական նախադեպի ինստիտուտի ներդրման իրավական հիմքի սահմանումն է և դատական իրավունքի ստեղծման գործում Վճռաբեկ դատարանի դերակատարության ամրագրումը<sup>9</sup>: Ամենից կարևորը, այդ ժողովում Տ. Սահակյանի կողմից հատուկ ընդգծվեց, որ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքների միատեսակ կիրառման ապահովման միակ միջոցը համապատասխան պալատի կայացրած որոշումներն են<sup>10</sup>:

4.Դատարանակազմական նշանակության պայմանների ստեղծում: Սահմանադրության 62-րդ հոդվածը ինչքանով որ կարող է հանդիսանալ դատական նախադեպի կայացման սահմանադրական հիմք, այնքան էլ կարող է աղավաղել այս ինստիտուտի էությունը, եթե հետագայում չիրականացվի ճիշտ դատարանակազմական քաղաքականությունը: Վերջին տարբերակը հնարավոր է այն դեպքում, եթե այդ քաղաքականությունը մշակողների մոտ գերակայի մեզ լավ հայտնի այն մոտեցումը, որ օրենքի միատեսակ կիրառության սահմանադրական պարտականությունը պետք է ապահովվի պարզաբանումների միջոցով: Եթե գնանք այս ուղղությամբ ապա 1. Դատարանների նախագահների խորհրդի՝ պարզաբանումներ տալու լիազորությունը պետք է փոխանցվի վճռաբեկ դատարանին, 2. որի համակարգում պետք է ստեղծվի առանձին ինչ-որ օղակ, որը կոնկրետ գործի շրջանակներից դուրս պետք է ներկայացնի այս կամ այն նորմի վերաբերյալ պարզաբանում: Դատական իշխանություն իրականացնելիս կոնկրետ գործի շրջանակներից դուրս տրվող պարզաբանումները, անկախ նրանից դրանք պարտադիր են, թե՛ ոչ, օժտված չեն կոնկրետ գործի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշման հեղինակությամբ:

Ուստի հանդգնված ենք, որ Վճռաբեկ դատարանի՝ օրենքների միատեսակ կիրառման ապահովման սահմանադրական պարտականության իրականացման միակ ընդունելի

<sup>9</sup> Մանուկյան Հ. Բարեփոխումների առանցքային դրույթները. Դատական իշխանություն. Սեպտեմբեր-հոկտեմբեր. 2005. 9-10/74-75/, էջ 4-5, Մկրտումյան Ա. Լայն հնարավորություններ դատական նախադեպի ներդրման համար. նույն տեղը, էջ 6-7, Մուրադյան Է. Կապահովվի դատական իշխանության միասնականությունը, նույն տեղը, էջ 8-9:

<sup>10</sup> Սահակյան Տ. Նախադեպը կդառնա իրավունքի աղբյուր: Դատական իշխանություն. Սեպտեմբեր-հոկտեմբեր. 2005. 9-10/74-75/, էջ 10-11:

եղանակը վճռաբեկ դատարանի /համապատասխան պալատների/ կողմից *կոնկրետ գործերի վերանայման արդյունքում ձևավորված իրավական դիրքորոշումներն են*։ Այդ իրավական դիրքորոշումները իրենց բնույթով և սահմանադրական նորմի ուժով, դուրս են գալիս կոնկրետ գործի շրջանակներից և պարտադիր են ստորադաս դատարանների և իրավակիրառ այլ մարմինների համար։

Մ. Խաչատրյանի կարծիքով, մեր հանրապետությունում դատական նախադեպային իրավունքի ձևավորմանը խոչընդոտում է քրեական գործերի կոլեգիալ քննությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում։ Դատական պրակտիկայի դիտարկումը ցույց է տալիս, որ միանձնյա կարգով գործը քննող դատավորներն ավելի ազատ են մեկնաբանում օրենքը<sup>11</sup>։ Միգուցե դատական իշխանության կրողներին առավել լավ են ծանոթ ներհամակարգի կոորպորատիվ հարաբերությունների խնդիրները, սակայն, կարծում ենք կոլեգիալության սկզբունքը ինքնին չի խոչընդոտում նախադեպի կայացմանը։ Բանն այն է, որ, օրինակ, կոլեգիալության սկզբունքով գործող Սահմանադրական արդարադատության մարմինները կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը համապատասխանաբար տալիս են Սահմանադրության, օրենքների և Եվրոպական Կոնվենցիայի այնպիսի մեկնաբանություններ, որոնք ունեն ոչ միայն իրավաստեղծ ակտերի նշանակություն, այլ նաև իրավաբանի համար կարող են հանդիսանալ իրավական նորմերի մեկնաբանման մեթոդաբանության վերաբերյալ հիմնալի ուսումնական ձեռնարկ։ Ուստի, այստեղ ևս պետք է ընդգծվի դատավորների մասնագիտական հասունացման, իրավական մշակույթի ձևավորման կարևորությունը։

Գործերի կոլեգիալ կարգով քննության ընթացքում դատական նախադեպի կայացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն դատավորների առանձին կարծիքները։ ՀՀ քր. դատ. օր.-ի 393 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ դատավորը առանձին կարծիքի մնալու դեպքում, իրավունք ունի այն շարադրել գրավոր ձևով՝ դատավճիռը հրապարակելու պահից 3 օրվա ընթացքում։ Առանձին կարծիքը հանձնվում է նախագահողին և նրա կողմից կցվում է գործի նյութերին՝ փակված ծրարով, որը կարող է բացվել միայն վճռաբեկ դատարանում գործի քննության ժամանակ, իսկ նույն հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ առանձին կարծիքի մնացած դատավորը նույնպես ստորագրում է դատավճիռը։

Տեսության մեջ նշվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի առանձին կարծիքը իր բնույթով կոմպետենտ /պրոֆեսիոնալ/ և դոկտրինալ /գիտական/ մեկնաբանման սինթոզ է, որը գիտական աշխարհայացքի ոլորտում ունի ֆունդամենտալ հենք<sup>12</sup>։ Քննարկվող հարցի տեսանկյունից առնվազն զարմանքի տեղիք է տալիս այն, որ «Սահմանադրական դատարանի» մասին ՀՀ օրենքում բացակայում է առանձին կարծիքի ինստիտուտը, ինչը պետք է լրացվի։

**5. Դատական որոշումների մատչելիության ապահովում։** Դատական նախադեպի կայացման կարևոր պայմաններից է դատական որոշումների մատչելիության ապահովումը։ Դատական որոշումների մատչելիության ապահովման եղանակ է այդ որոշումների հրապարակումը։ Դատական ակտերի մատչելիությունը իրականում կապահովվի, եթե այդ որոշումները հրապարակվեն տպագիր և էլեկտրոնային եղանակներով։

Կարծում ենք, այս փուլում զուտ ֆինանսական նկատառումներից ելնելով իդեալիստական կլինի, եթե պահանջվի տպագիր եղանակով հրապարակել դատական բոլոր որոշումները։ Եվ առհասարակ, նպատակահարմար չէ դատական բոլոր ատյանների վերջնական ակտերի տպագիր հրապարակումը։ Սակայն, կարծում ենք, օրենքների միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական պարտականությունից բխում է վճռաբեկ դատարանի բոլոր որոշումների տպագիր եղանակով հրապարակելու պահանջը։

Ներկայիս օրենսդրությունը պահանջում է դատական ակտերի պարտադիր տպագիր հրապարակելու երկու դեպք՝ 1. «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 50 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման։ «Սահմանադրական դատարանի» մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սահմանադրական

<sup>11</sup>Խաչատրյան Մ. Արդարացի դատական քննության իրավունք։ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդված. Երևան, 2004, էջ 69։

<sup>12</sup> Басангов, Д. А. Доктринальное конституционное толкование в деятельности Конституционного Суда РФ: Автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 2004. ст. 16.

դատարանի որոշումներն ու եզրակացությունները հրապարակվում են պաշտոնական մամուլում և տեղեկագրում, 2. «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը պետք է հրապարակվի նույն կարգով, որով հրապարակվել է անվավեր ճանաչված իրավական ակտը: Փաստորեն, եթե դատարանի կողմից անվավեր ճանաչված ակտը հրապարակվել է տպագիր եղանակով, օրինակ՝ պաշտոնական տեղեկագրում կամ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում, ապա դատական որոշումը նույնպես պետք է հրապարակվի այդ տեղեկագրերում:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային եղանակով դատական ակտերի հրապարակմանը, ապա կարծում ենք, որ այս եղանակը հնարավորություն տալիս է հրապարակել մեծ թվով դատական ակտեր և այն տեղադրել ինտերնետում: Սակայն հրապարակման այս եղանակի դեպքում պետք է մշակվի համապատասխան տեղեկատվական-որոնողական համակարգ: Նման համակարգի ձևավորման, դատական որոշումների ընտրության սկզբունքների հարցում մեծ նշանակություն ունի Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Իրավական տեղեկատվական-որոնողական համակարգերում դատական որոշումների որոնման, մշակման, ներկայացման և արխիվացման» մասին № R (95) 11 հանձնարարականը (11.09. 1995) և դրա լրացումները<sup>13</sup>: Համաձայն նշված հանձնարարականի՝ որոնողական ավտոմատացված համակարգերի խնդիրներն են մասնավորապես՝

- թեթևացնել իրավաբանների աշխատանքը՝ ամբողջական և թարմ տեղեկատվության արագ տրամադրման ճանապարհով,
- տեղեկատվություն տրամադրել բոլոր անձանց, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով հետաքրքրություն են ցուցաբերում դատական պրակտիկայի նկատմամբ,
- նոր դատական որոշումների մասին տեղեկության արագ տարածում, հատկապես իրավունքի զարգացող ոլորտներին վերաբերող,
- մեծ թվով դատական որոշումների մասին տեղեկատվության տարածում, որոնք վերաբերում են ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի հարցերին /օրինակ՝ փոխհատուցման կամ ալիմենտի չափերի, պատիժների ժամկետների մասին/,
- նպաստել դատական պրակտիկայի միասնականությանը,
- օրենսդրին հնարավորություն տալ վերլուծելու օրենքների կիրառման պրակտիկան,
- հեշտացնել դատական պրակտիկայի ոլորտում գիտական ուսումնասիրությունները,
- որոշ դեպքերում վիճակագրության նպատակով տրամադրել տեղեկատվություն:

Կարծում ենք այս խնդիրներն ինքնին վկայում են դատական նախադեպի կայացման հարցում դատական որոշումների մատչելիության կարևորության մասին: Ավելին, դատական որոշումների մատչելիությունը նպաստում է նաև գիտության էմպիրիկ բազայի զարգացման, տեսության և պրակտիկայի դիալեկտիկական միասնության ապահովմանը:

Այսպիսով, ՀՀ-ում դատական նախադեպի կայացումը առնչվում է դատաիրավական համակարգի մի շարք հիմնախնդիրներին, որոնք պետք է հանդիսանան համակողմանի քննարկումների առարկա:

<sup>13</sup> Рекомендация № R (95) 11 Комитета министров государствам-членам относительно отбора, обработки, представления и архивации судебных решений в правовых информационно-поисковых системах Принята Комитетом министров 11 сентября 1995 года